

Բ Ա Յ Ր Ո Ն Ի

Այսօր վերջացնում եմ երեսուն վեց տարիս:*)

Մխստունդի, յունուար 22, 1824

ժամ է որ սիրտըս շարժելուց դադարէ,
Երբ դադրած է ուրիշ սրտեր շարժելուց.
Բայց ինձ թէև է՛լ ոչ մի սիրտ չսիրէ՝
Ես չեմ դադրիլ սիրելուց:
Կեանքըս հասաւ տերևթափին դեղնորակ.
Սիրոյ ծաղկունք ու պրտուղներ գընացին.
Ճճի և որդ և փրտութեան եղանակ
Եւ կսկիծներ մընացին:
Կուրծքըս այրող ու ճարակող այս կըրակ
Հրաբղխային մի կղզու պէս մենակ է.
Նըրա բոցից չէ վառուում ջահ ու ճըրագ
Դիակնակէզ խարոյկ է:

*) Այս քերթուածը, Բայրոնի վերջինը, գրուած է Մխստունդիում, ուր նա կուռում էր Յունաստանի ազատութեան համար: Շատերի կարծիքով՝ նրա բոլոր երգերի գոհարն է այս. մեռնելուց քիչ առաջ գրուած այս անասելի տխուր տողերի մէջ՝ բանաստեղծը կարծես մարգարէական հոգով գուշակում է իր մօտալուտ մահը. ոչինչ չէ կարող աւելի լաւ պատկերացնել Բայրոնի հոգին, քան այն վսեմ շեշտը, որով հրաժարուում է ամեն ետական զգացումից, աւելի ազնիւ նպատակի համար ապրելու և մեռնելու համար, այդ հոգին, որ այնքան տարօրինակ կերպով լի էր տգեղ և գեղեցիկ կիրքերով, բայց որի մէջ վերջ ի վերջոյ, գեղեցիկը յաղթում է:

Յոյս և երկիւղ, յոյզ և նախանձ վերջացաւ.
 Չունիմ բաժին վշտի հետ խառն ինդուլթեան.
 Եւ սրտիս մէջ սիրոյ ոյժը մարեցաւ.
 Միայն կըրում եմ շղթան:

Բայց ո՛չ այսպէս, և ո՛չ այստեղ է վայել,
 Որ այս խոհեր ցնցեն հողին իմ տրտում.
 Ոչ արդ, երբ փառքը հերոսի ճակատը
 Կամ դազաղն է պըսակում:

Ի՞նչ եմ տեսնում իմ շուրջ.— սըրեր, դրօշակներ,
 Եւ դաշտ ռազմի, և փառք, և հին Յունաստան.
 Մպարտացին, որի դազաղն ասպարն էր
 Չէ՛ր ակելի ինքնիրջեան:

Ձարթիր, ոգիս, Յունաստանը զարթել է.
 Տես ո՛ւմ միջով քո կեանք— արիւնըդ կրկին
 Պիտի հոսէ դէպի ծընող իր լիճը
 Եւ այնուհետ՝ զարկ ուժգին:

Կոխ տուր ոտքով նորից յուզուած այդ կրքեր,
 Ո՛վ անարժան մարդկութիւն.
 Քեզ ի՞նչ փոյթ են գեղեցկունու գգուանքներ,
 Ժպիտը կամ բարկութիւն:

Ափսոսում ես երիտասարդ օրերիդ.
 Էլ ի՞նչ կեանք է ու տրտունջ.
 Այս է երկիրը պատուաբեր մահերի.
 Օ՛ն դէպի դաշտ, տուր քո շունչ:

Գընա՛ փնտուիր (փնտուող քիչ կայ, գտնող շատ)
 Գընա՛ փնտուիր զինուորի մահ քեզ համար.
 Ա՛յն է միայն քեզ արժանի. նայիր շուրջ,
 Ընտրիր քո տեղ, հանգիստ առ:
 Յովհ. Մասնհան